



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵԻ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Միջին Արևելքի Ուղղափառ Եկեղեցիներու՝ Ղրպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հայց. Առաքելական Եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեքշաբթի, 31 Մարտին ունեցան իրենց հերթական հանդիպումը, օրակարգի վրայ ունենալով միացեալ ծրագիրներ ու գործակցութեան նախագիծեր:

Հանդիպումը տեղի ունեցաւ Ասորիներու Ս. Եփրեմ Մայր Եկեղեցւոյ մէջ, Պըրպէնք, հիւրընկալութեամբ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Եուճին Քափլան Արքեպիսկոպոսին:

Ժողովական աշխատանքներու սկսելէ առաջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ղրպտի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոս, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեան, եւ հոգեւորականները միացեալ աղօթքի պահ մը ունեցան, իւրաքանչիւրը երգելով ու աղօթելով իր լէզուով:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակի գոյգ վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Ժողովը զեկուցումներ լսեց Կիրակնօրեայ դպրոցներու եւ երիտասարդական խմբակներու համատեղ գործունէութեան ու ծրագիրներուն մասին, կատարելով իրագործումներուն արժեւորումը, եւ մշակեց յառաջիկայ ձեռնարկներու ծրագիրը:

Ժողովը նաեւ որոշեց յաւելեալ մղում տալ երիտասարդական խմբակներու գործունէութեան:

Որոշուեցաւ այս տարի եւս կատարել համատեղ Ս. Պատարագ, Ղրպտի Եկեղեցւոյ հիւրընկալութեամբ:

Արծարծուեցաւ նաեւ Ամերիկայի մէջ գործող Ուղղափառ եւ Զրիստոնէայ այլ Եկեղեցիներու հետ գործակցութեան անհրաժեշտութիւնը. այս նպատակով առնուեցան գործնական քայլեր:

Ժողովական աշխատանքներու սկիզբը տեղի ունեցաւ սիրոյ սեղան, իսկ աւարտին, յիշատակի նկար մը առնուեցաւ:

PRELATE PARTICIPATES IN MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

On Tuesday, March 31st, the members of the Council of Oriental Orthodox Bishops of the Western United States gathered at St. Ephraim Syriac Orthodox Cathedral in Burbank for their regular meeting. The Prelate participated in the meeting, along with H.E. Archbishop Hovnan Derderian (Western Diocese), H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Syriac Church), and H.G. Bishop Serapion, (Coptic Church).

Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian also participated, as did clergy members from the other three dioceses.

The meeting convened following a prayer services in which the members participated in their respective languages.

Items on the agenda included a discussion on the past, present, and future activities of the Sunday Schools and Youth Groups, the planning of the annual joint Divine Liturgy which this year will be hosted by the Coptic Diocese, and a discussion on furthering collaboration between other Orthodox and Christian Churches, for which preliminary steps are underway.